

Պ Լ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌԻՒԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱՀԱՆՎԱԾ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ**

Հ/Հ	Բովանդակությունը	Էջ
1	2	3
I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ		
1.	Պլանի սահմանումը և նպատակը	3
2.	Պլանում օգտագործվող հիմնական հասկացությունները	4-6
3.	Պլանում ներգրավվող մարմինները և դրանց գործառույթները	6-7
4.	Պլանի իրավական հիմքը	7-9
II. Տարահանված բնակչության կենսաապահովման համակարգերի արտադրական հնարավորությունների գնահատումը		
1.	Համաճարակային, սեյսմիկ, սողանքային, ջրհեղեղային, հրդեհային և այլ արտակարգ իրավիճակների տեսանկյունից հնարավոր իրավիճակներ	
1)	Մարզի տարածքում համաճարակային հիվանդություններ	9-10
2)	Մարզի անտառներ	10
3)	Մարզի սեյսմիկության և սեյսմատեկտոնական վիճակը	10
4)	Մարզի սողանքային երևույթներ	11-12
5)	Մարզում սելավային հոսքեր	12
6)	Մարզի հիդրոտեխնիկական կառույց	13
7)	Մարզի ջրհեղեղները	12-13
8)	Մարզի քիմիական վտանգավոր օբյեկտ	13
2.	Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ	13-15
3.	Մարզի կենսաապահովման համակարգի օբյեկտների վերաբերյալ տեղեկություններ	15
4.	Մարզում պահուստային ռեսուրսներ	15
5.	Մարզի բուժհաստատությունների հնարավորությունները	15-16
III. Տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների իրականացման և ապահովման կարգը		
1.	Տեղեկատվական ապահովումը	16
2.	Կացարաններով ապահովումը	16
3.	Կենցաղ-տնտեսական ապահովումը	17
4.	Ջրամատակարարումը	17
5.	Բժշկական ապահովումը	18
6.	Սննդի և նյութատեխնիկական ապահովումը	18-19
7.	Կրթության ապահովումը	19-20
8.	Սոցիալական ապահովումը	20
9.	Զբաղվածության ապահովումը	20
10.	Տրանսպորտային ապահովումը	20-21
IV. Հումանիտար օգնության ստացումը և բաշխումը		21
V. Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում փոխգործողությունների կազմակերպման կարգը		21
VI. Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում կառավարման կազմակերպումը և համակարգումը		22
Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ Ն Ե Ր		
1.	ԹԻՎ 1 – Մարզի անտառապատ տարածքներում խոշոր հրդեհների հավանակությունը	10
2.	ԹԻՎ 2 – Սողանքային օջախների վերաբերյալ	10-11
3.	ԹԻՎ 3 – Սելավավտանգ գետավազանների վերաբերյալ	11
4.	ԹԻՎ 4 – Ջրհեղեղների տեսակետից վտանգավոր տարածքները	12-13

1	2	3
5.	ԹԻՎ 5 - Մարզի կենսապահովման համակարգի օբեկտները և նրանց մոտավոր հնարավորությունները	23-26
6.	ԹԻՎ 6 - Մարզի կենցաղ-տնտեսական օբյեկտների ցանկը և նրանց հնարավորությունները	27-31
7.	ԹԻՎ 7 - Լոռու մարզի առողջապահական ընկերություններ	32-33
8.	ԹԻՎ 8 - Առաջին անհրաժեշտության ապրանքներ արտադրող ընկերություններ	34
10.	Թիվ 9.1 - Տուժած բնակչության օրական սննդամթերքի և էներգետիկ արժեքի ֆիզիոլոգիական պահանջարկի չափաքանակները	35
11.	Թիվ 9.2 - 1 տարեկանից բարձր տուժածներին սննդամթերքով ապահովման չափաքանակները	36
12.	Թիվ 9.3 - 1 տարեկանից բարձր տուժածներին տրվելիք սննդամթերքի փոխարինիչների չափաքանակները	37-38
13.	Թիվ 9.4 - Մինչև 1 տարեկան տուժած երեխաների համար սննդամթերքի միջին օրական ռացիոնը	39
14.	Թիվ 9.5 - Տուժածներին ջրով ապահովման չափաքանակները	40
15.	Թիվ 9.6 - Տուժածներին տրվող հագուստի, ներքնազգեստի և կոշիկի ապահովման լրակազմերը	41
16.	Թիվ 9.7 - Տուժածներին տրվող հագուստի, ներքնազգեստի և կոշիկի տեսակակազմերը և չափսերը	42
17.	Թիվ 9.8 - Տուժած երեխաներին տրվող հագուստի և կոշիկի չափսերը	43
18.	Թիվ 9.9 - Առաջին անհրաժեշտության ապրանքներով տուժածներին ապահովման չափաքանակները	44
19.	Թիվ 9.10 - Տուժածներին անհրաժեշտ կոմունալ-կենցաղային սպասարկման չափաքանակները	45
20.	Թիվ 9.11 - Տուժածներին անհրաժեշտ բժշկական ապահովման չափաքանակները	46
21.	Թիվ 9.12 - Լոռու մարզի բնակչության թվաքանակը ըստ տարիքային խմբերի և տոկոսային հարաբերությամբ	47-52
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		52

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ինչ է սահմանում պլանը և պլանի նպատակը

1) Սույն պլանով սահմանվում են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի (այսուհետ՝ Մարզ) տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումները և դրանց ապահովմանն ուղղված պահանջները:

2) Բնակչության կենսաապահովման գործընթացը ներառում է՝

ա. արտակարգ իրավիճակների (այսուհետ՝ ԱԻ) սպառնալիքի և առաջացման դեպքում կազմակերպությունների աշխատողների գործունեության ղեկավարումը,

բ. բնակչության և տարածքների պաշտպանությունն աղետների հետևանքներից,

գ. բնակչության ապահովումը խմելու ջրով, սննդով և առաջին անհրաժեշտության ապրանքներով,

դ. սննդի, սննդի հումքի, ջրի և ջրաղբյուրների պաշտպանությունը ռադիացիոն, քիմիական և կենսաբանական աղտոտումից,

ե. բնակչության ապահովումը բնակչության տեղերով և աշխատանքով,

զ. բնակչության բժշկական ապահովումը,

է. բնակչության կոմունալ-կենցաղային ապահովումը,

ը. բնակչությանն ԱԻ պայմաններում գործելու և պաշտպանվելու մեթոդների ուսուցումը,

թ. ռադիացիոն, քիմիական և կենսաբանական աղտոտվածության պայմաններում գործունեության աշխատակարգի սահմանումը,

ժ. բնակչության սանիտարական մշակումը,

ժա. տարածքի, կառույցների, տրանսպորտային միջոցների, սարքավորումների, սննդի, սննդի հումքի հատուկ մշակումը,

ժբ. աղետի գոտում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար ուժերի և միջոցների պատրաստականության բերումը,

ժգ. բնակչությանն ԱԻ բնույթի, ծավալի, հնարավոր վտանգների և վարվելակերպի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,

ժդ. բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածությունը:

2. Պլանում օգտագործված հիմնական հասկացությունները

1) **Արտակարգ իրավիճակում տուժած՝** նշված իրավիճակների հետևանքով վիրավորված (մարմնական վնասվածքներ ստացած), թունավորված, վարակված (ախտահարված) կամ նյութական ու բարոյական կորուստներ կրած, ինչպես նաև տարահանված անձ (անձինք):

2) **Բնակչության կենսաապահովում՝** բնակչության կենսագործունեության համար նրա ֆիզիոլոգիական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծում և պահպանում:

3) **Բնակչության կենսաապահովման համակարգ՝** արտակարգ իրավիճակում մարդու կյանքի և առողջության պաշտպանության և պահպանության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծման նպատակով կառավարման մարմիններից, ծառայություններից, կազմավորումներից և բնակչության կենսաապահովման միջոցներից կազմված համակարգ:

4) **Բնակչության կենսաապահովման տարածքային համակարգ՝** Հայաստանի Հանրապետության մեկ վարչատարածքային բաժանման սահմանում խնդիրները լուծող կենսաապահովման համակարգ:

5) **Բնակչության կենսաապահովման ենթահամակարգ՝** արտակարգ իրավիճակում բնակչության կենսաապահովման համակարգի մաս՝ որոշակի կենսաապահովման տարատեսակ իրականացնող (օրինակ՝ ջրամատակարարման, կոմունալ-կենցաղային, մթերային մատակարարման ենթահամակարգեր և այլն) ենթահամակարգ:

6) **Արտակարգ իրավիճակում բնակչության կենսաապահովման ժամանակաշրջան՝** սահմանափակված արտակարգ իրավիճակի առաջացման սկզբից մինչև վերջ բնակչության կենսաապահովման կենսականորեն անհրաժեշտ կարևոր ռեսուրսների դեֆիցիտի վերացման, առօրյա պայմանների չափանիշներով բնակչության կայուն մատակարարման անցման ժամանակահատված:

7) **Արտակարգ իրավիճակում տուժած բնակչության կենսաապահովման առաջնահերթ պահանջներ՝** բնակչության կենսաապահովման ժամանակաշրջանում կյանքի և առողջության պահպանման համար անհրաժեշտ, կենսական կարևոր նյութական միջոցներ և ծառայություններ:

8) **Բնակչության կենսաապահովման չափաքանակներ՝** տուժած բնակչության հիմնական պահանջմունքների ապահովման համար ծառայությունների և նյութական միջոցների ծավալներ (քանակներ):

9) **Խմելու-տնտեսական ջրով ապահովում**՝ բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին ջրով ապահովման համար ջրի արդյունահանում, մաքրում և վարակազերծում, պահպանում, պաշարների լրացում, տեղափոխում ու բաշխում:

10) **Սննդամթերքով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին սննդամթերքով ապահովման համար դրանց արտադրություն, պահպանում, տեղափոխում ու բաշխում:

11) **Առաջին անհրաժեշտության առարկաներով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերին ամենօրյա արդյունաբերական ապրանքներով (օրինակ՝ հագուստ, կոշիկ, անկողնային պարագաներ, տնտեսական ապրանքներ և ճաշասենյակային սպասք և այլն) ապահովման համար դրանց արտադրություն, պահպանում, տեղափոխում ու բաշխում:

12) **Կացարանով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին կացարաններով ապահովման համար աղետի գոտում պահպանված բնակելի տարածքների օգտագործում, ինչպես նաև տարահանման տարածքներում ժամանակավոր կացարանների փոխադրում, ծավալում և կառուցում:

13) **Կոմունալ-կենցաղային ծառայություններով ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ջեռուցման (տաքության), լուսավորության, տարածքների սանիտարական մաքրման, բաղնիքավազքարանային, հուղարկավորության և այլ անհրաժեշտ ծառայությունների ապահովում:

14) **Բժշկական օգնության և սպասարկման ու սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում**՝ տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին առաջին բուժօգնության (որակավորված և մասնագիտացված) հետագա տարահանմամբ (ըստ ցուցումների) բուժական կազմակերպություններ ստացիոնար բուժման համար, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

15) **Տրանսպորտային ապահովում**՝ վտանգավոր (աղետի) գոտուց տուժած բնակչության տարահանման (տեղափոխման), ինչպես նաև կենսաապահովման բոլոր տեսակների նյութական ռեսուրսների մատակարարման խնդիրների լուծման համար միջոցառումների իրականացում:

16) **Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովում**՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության

Հայաստանի փրկարար ծառայության և այլ կառավարման մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման, պահպանման, թարմացման և յուրաժամանակ փոխանցման, ինչպես նաև բնակչությանն արտակարգ իրավիճակների ծագման հավանականության (փաստի), դրա հնարավոր հետևանքների, աղետի գոտում, երթուղիներում և տարահանման տարածքներում վարքի կանոնների մասին գործընթացները:

17) **Բնակչության կենսաապահովման համակարգի ուժեր՝** արտակարգ իրավիճակներում բնակչության կենսաապահովման խնդիրների լուծումը ժամանակավոր կամ մշտական իրականացնող միավորումներ և կազմավորումներ:

18) **Տարահանված և տեղաբաշխված բնակչություն՝** վտանգավոր տարածքից անվտանգ տարածք ժամանակավոր տեղափոխված ու տեղաբաշխված մարդիկ:

19) **Բնակչության կենսաապահովման տարածքային համակարգերի արտադրական հնարավորություններ՝** ռեսուրսների քանակը (ծառայությունների ծավալը), որոնք կարող են տրամադրվել տարահանված բնակչության տեղաբաշխման տարածքներում նրանց կարիքների բավարարման համար՝ կենսաապահովման ժամանակահատվածի ամբողջ ընթացքում:

3. Պլանում ներգրավվող մարմինները և դրանց գործառույթները

1) Մարզպետարանը.

ա. կազմակերպում և ղեկավարում է տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի իրականացումը մարզի տարածքում.

բ. մասնակցում է հանրապետական պլանով նախատեսված տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացմանը,

գ. հանձնարարականներ է տալիս միջոցառումների նախապատրաստման վերաբերյալ,

դ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

2) տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքներ)՝

ա. իրենց համայնքում կազմակերպում և իրականացնում են տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովումը.

բ. գնահատում են համայնքի կենսաապահովման համակարգի արտադրական հնարավորությունները.

գ. կազմակերպում են համայնքի տարածքում տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանավորումը.

դ. իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

3) Կազմակերպությունները՝

ա. կազմակերպում և իրականացնում են իրենց տարահանված աշխատողների տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովումը.

բ. կազմակերպում են իրենց կազմակերպության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանավորումը.

գ. իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4) Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն)

ա. համակարգում է մարզպետարանի կողմից տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման պլանավորման գործընթացները.

բ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

4. Պլանի իրավական հիմքը

1) Պլանի իրավական հիմքերն են՝

ա. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

բ. «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

գ. «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

դ. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

ե. «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

զ. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

է. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման կարգը հաստատելու մասին» N 824-Ն որոշումը.

ը. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշումը.

թ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» N 592 որոշումը.

ժ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչությանը անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» N 679 որոշումը.

ժա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1304-Ն որոշումը.

ժբ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին» N 1925-Ն որոշումը.

ժգ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» N 1494 որոշումը.

ժդ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» N 1064-Ն որոշումը.

ժե. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշումը:

II. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5. Համաճարակային, սեյսմիկ, սողանքային, ջրհեղեղային, հրդեհային և այլ արտակարգ իրավիճակների տեսանկյունից հնարավոր իրավիճակներ

1) Մարզի տարածքում համաճարակային հիվանդություններ կարող են առաջանալ օդակաթիլային ճանապարհով, սննդամթերքից, ջրից, գյուղկենդանիների, կրծողների և միջատների միջոցով:

Մարզում վերջին հինգ տարվա ընթացքում մարդկանց ինֆեկցիոն հիվանդություններն են եղել Սալմոնելոզը, Սուր աղիքային ինֆեկցիան և Տուլարեմիան:

Վերջին 5 տարիներին Մարզում անասնահամաճարակների հիմնական տեսակներն են հանդիսացել «Խոզերի աֆրիկյան ժանտախտ» և «Բրուցելյոզ» հիվանդությունները: 2007-2010թթ. 1-ին կիսամյակը ներառյալ Լոռու մարզում «Խոզերի աֆրիկյան ժանտախտ» հիվանդությունից մարզի թվով 24 համայնքերում անկվել և հարկադիր սպանդի են ենթարկվել 5260 գլուխ խոզեր:

«Բրուցելյոզ» հիվանդությունը ծագել է Ձյունաշող համայնքում, որի ժամանակ անկվել և հարկադիր սպանդի են ենթարկվել համայնքի թվով 111 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ:

1) Էպիֆտոտիկ հիվանդությունների տարածման պատճառ կարող են հանդիսանալ ներմուծվող սերմնանյութը, թերմշակված բուսաբուծական մթերքները, տնկանյութը և այլն:

Մարզում բույսերի հիվանդություններից հիմնականում տարածված են՝

ա) կարտոֆիլ – ֆիտոֆտորա (սնկային հիվանդություն), օղակավոր փտումը, թաց փտումը: Այս հիվանդությունները բնորոշ են նաև լուլիկին;

բ) հացահատիկային կուլտուրաներ – մրրիկներ՝ փոշե և քարե;

գ) բանջարեղեն – կիլա (արմատային քաղցկեղ), որը բնորոշ է հիմնականում կաղամբներին;

դ) պտղատու ծառեր (խնձորենի, տանձենի և այլն) – քոս, ալրացող;

ե) կորիզավոր պտղատու ծառեր (դեղձենի, ծիրանենի և այլն) – ծակոտկեն բծահարություն և Մոնիլյան այրվածք:

3) Մարզի անտառների զբաղեցրած ընդհանուր տարածքը 101385 հա է, որից անտառածածկ՝ 80867 հա, որոնք սպասարկվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 5

անուատնտեսությունների և նրանց կազմի մեջ մտնող թվով 25 անտառապետությունների կողմից:

Աղյուսակ 1

Մարզի անտառապատ տարածքներում խոշոր հրդեհներ հնարավոր են.

Անտառային հրդեհի հնարավոր վայր	Գերապեսչական պարկանելությունը	Ջբաղեցրած փարածքը /հա/
Թումանյանի տարածաշրջան	«Հայաստան» ՊՈԱԿ	40 526
Գուգարքի տարածաշրջան		31 300
Տաշիրի տարածաշրջան		3200

4) Սեյսմիկության և սեյսմատեկտոնական տեսակետից Մարզը, հատկապես նրա հարավային մասը, հանդիսանում է Հայաստանի ամենաբարդ տարածաշրջաններից մեկը: Այստեղով անցնում են Հայաստանի ամենախոշոր և բարձր սեյսմիկ պոտենցիալ վտանգ ունեցող Փամբակ-Սևանի, Սպիտակի ակտիվ բեկվածքները և նրանց ճյուղավորումները:

Մարզի ամբողջ տարածքը սեյսմիկ ակտիվ գոտի է, նրա արևմուտքը և հարավը մտնում են 9 և ավելի, իսկ հյուսիսը՝ 8-9 բալ ուժգնություն ունեցող երկրաշարժային գոտիների մեջ:

5) Մարզում սողանքային երևույթների ազդեցության տակ է գտնվում շուրջ 1900 հա տարածք: Մարզի մոտ 18 բնակավայրերում դիտարկվում է սողանքային երևույթների ակտիվացում՝ ստեղծելով աղետավտանգ պայմաններ բնակչության համար:

Մարզի տարածքի բնակավայրերին և հաղորդակցուղիներին սպառնող սողանքային օջախներն են.

Աղյուսակ 2

Սողանքային օջախի գտնվելու վայրը	Սողանքը բնութագրող ցուցանիշները			
	Սողանքի մակերեսը (հա)	Այդ թվում բնակավայրին սպառնացող (հա)	Ընդգրկած շերտը (մ)	Գրունտային ջրերի առկայությունը
Վանաձոր	166.4	94.7	8-30	+
Շահումյան	37	4	12-14	+
Կաճաճկուտ	20	20	10-14	-
Գուգարք	75	10	10-15	-
Ձորագետ	28	-	12-15	-
Վանաձոր-Ստեփանավան	20	-	5-8	-
Վահագնի-Վանաձոր	35	-	17-20	-
Արջուտ-Գյումրի	25	10	10-15	-

Մարց	10	3	5-6	-
Օձուն	14	14	>5	+
Մեծ Պարնի	40	-	20-22	-
Բլագոդարնոյե	11	5	5-6	-
Գյուլագարակ	3	3	5-8	-
Գարգառ	26	18	5-6	-
Սարատովկա	20	6	8-10	-
Գոգարան	42	21	5-8	1
Կուրթան	8	9	5	3
Դեբեդ-Ձորագետ	11	-	6	-

6) Մարզում սելավային հոսքերն առաջանում են Բագումի և Փամբակի լեռնաշղթաների հարավային, Լավարի ու Լեջան լեռների հարավային և արևմտյան լանջերի ձորակներում:

Այստեղ սելավների ձևավորմանը նպաստող պայմաններն են՝ հորդառատ անձրևները, ռելիեֆի խիստ կտրտվածությունը և լանջերի նշանակալից թեքությունները (35 աստիճան և ավելի), լեռնային ապարների թույլ ջրաթափանցիկությունը և հողմահարման հանդեպ նրանց ունեցած թույլ դիմադրողականությունը, ինչպես նաև վերջին տարիների ծառահատումները:

Սելավավտանգ գետավազաններում գտնվող բնակավայրերն են.

Աղյուսակ 3

Ռիսկի աստիճանը	Բնակավայրեր (գյուղաձուների թիվ)	Սելավավտանգ գոտու բնակչության թիվը
I (R* = 3 - 6)	Արևաշող (305), Բագում (110), Ալավերդի (2630), Վանաձոր (1700), Մարգահովիտ (460), Լերմոնտովո (110), Ֆիդլետովո (150)	5 465
II (R* = 1 - 3)	Սարալանջ (20), Լուսաղբյուր (120), Մեծ Պարնի (110), Ջրաշեն (170), Ծաղկաբեր (68), Շիրակամուտ (130), Գոգարան (75), Լեջան (45), Ագարակ (65), Յաղդան (20), Օձուն (260), Բովաձոր (25),	1 108
III (R = 1)	Հավար (2), Մարց (10), Ախթալա (22), Գարգառ (35),	69

7) Մարզի տարածքում տեղաբաշխված է Մեծավանի ջրամբարը, որի ծավալը կազմում է 5,4մլն.մ³, հայելու մակերեսը 330հա, պատվարի բարձրությունը 7մ, առավելագույն խորությունը 5.5մ, միջին տարեկան հոսքը 40 մլն.մ³:

Պատվարի փլուզման դեպքում ջրածածկման տարածքը կկազմի մոտ 26 քառ.կմ, ջրածածկման կենթարկվեն Ձյունաշող համայնքը, Սարատովկա և Տաշիր համայնքների հյուսիսային հատվածները՝ մոտ 1300 մարդ բնակչությամբ:

Ջրամբարի պատվարի փլուզման և դրա հետևանքով վտանգավոր ջրածածկման ժամանակահատվածը հիմնականում ապրիլ-օգոստոս ամիսներն են, երբ դրանում ջրի մակարդակը (ծավալը) հասնում է առավելագույնի: Մնացած ամիսներին ջրամբարը վտանգ չի ներկայացնում:

8) Մթնոլորտային տեղումների քանակը և դրանց բաշխումը տարվա ընթացքում Լոռու մարզում մեծ տարբերությունների չունի: Մարզում, արևմուտքից դեպի արևելք տեղումների քանակը նվազում է: Այսպես, Ուրասարում՝ 785 մմ, Սարատովկայում՝ 727 մմ, Գյուլագարակում՝ 716 մմ, Տաշիրում՝ 713մմ և այլն: Մարզի արևելքում և հյուսիս-արևելքում տեղումները գնալով նվազում են (Ալավերդիում՝ 516 մմ, Ախթալայում՝ 431մմ, Շնողում՝ 505մմ):

Տեղումների առավելագույն քանակը դիտվում է գարնան վերջին և ամռան սկզբին (ապրիլ – հունիս): Լոռու մարզի եզրային լեռների բարձրադիր մասերի հողմահայաց լանջերին (արևմտյան և արևելյան) թափվում են ամենաշատ տեղումները՝ 800 - 900 մմ: Դեպի Լոռու գոգավորություն տեղումների տարեկան միջին քանակը աստիճանաբար նվազում է՝ 600 - 700մմ, որոշ տեղերում ավելի քիչ՝ 400 - 500մմ:

9) Լոռու մարզը առանձնանում է ջրագրական խիստ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով:

Մարզի գետային ցանցը լեռնային է: Մեծ մասը սկիզբ է առնում բարձր լեռներից, հոսում նեղ, երբեմն անանցանելի կիրճերով՝ շատ տեղերում առաջացնելով ջրվեժներ, սահանքներ: Դրանք ունեն զգալի անկում և թեքություն, ջրաէներգետիկ մեծ ուժ: Գետերի սնումը կատարվում է բացառապես անձրևաջրերի, ձնհալի և ստորերկրյա ջրերի միջոցով:

Աղյուսակ 4

Ջրհեղեղների տեսակետից վտանգավոր տարածքները

ՀՀ	Գետի անվանումը	Ջրի միջին մակարդակը /դիրակետերում/		Գարնանային վարարումների ժամանակ առավելագույն ջրի մակարդակը		Վտանգավոր (խոցելի) հատվածներ
		մակարդակ (սմ)	ելք (մ ³ /վրկ)	մակարդակ (սմ)	ելք (մ ³ /վրկ)	

1.	գ. Փամբակ դ. Վանաձոր	261	6.3	2.75	83.5	գ.գ. Խնկոյան, Հարթազյուղ, Կաթնաջուր, Մեծ Պարնի Շիրակամուտ, Գեղասար, Սարահարթ, Նոր Խաչակապ, Լեռնապատ, Արջուտ, Փամբակ, ք.Սպիտակ, ք.Վանաձոր, Սպիտակի թիվ 1 պ/կ, Սպիտակի աջափնյա պ/կ, Երևան-Թբիլիսի ա/ճանապարհ, երկաթգիծ
2.	գ. Փամբակ դ. Թումանյան	101	10.6	297	171	
3.	գ. Փամբակ դ. Շիրակամուտ	124	1.92	265	65.6	
4.	գ. Փամբակ դ. Մեղրուտ	258		384		
5.	գ. Ձորագետ դ. Կաթնառատ	158		254		ք. Ստեփանավան, գ.գ. Կուրթանի, Ձորագյուղի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր
6.	գ. Ձորագետ դ. Ստեփանավան	127		337		
7.	գ. Ձորագետ դ. Գարգառից ցածր	517		705		
8.	գ. Դեբեդ դ. Ախթալա	332		436		ք.թումանյան, Ալավերդի, Ախթալա, գ.գ. Ձորագետ, Օծուն, Հաղպատ, Ծաթեր, Երևան-Թբիլիսի ա/ճան, երկաթգիծ
9.	գ. Դեբեդ դ. Այրում	234		457		
10.	գ. Մարցիգետ դ. Թումանյան	202		439		գ. Շամուտ, ավտոճանապարհ
11.	գ. Տանձուտ դ. Վանաձոր	255		432		ք.Վանաձոր, գ.Շահումյան
12.	գ. Կարբի					ք.Վանաձոր, գ. Շահումյան
13.	գ. Շնող					գ.գ.Շնող, Թեղուտ
14.	Որդնավ					գ.գ.Ձրաշենի, Լեռնավանի, Սարամեջի, Լեռնանցքի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, ք.Սպիտակ
15.	գ. Գարգառ դ. Կուրթան	247		385		գ.գ.Գարգառի, Պուշկինոյի, Վարդաբլուրի, Գյուլագարակի, Կուրթանի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր
16.	Չիչխան					գ.Շիրակամուտի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, գ.գ. Արևաշող, Սարհարթ, Շենավան, նրանց բանջարանոցներ, Վանաձոր-Գյումրի ա/ճ, երկաթգիծ
17.	Բազում (Չալաք)					ք.Վանաձորի, գ.Բազումի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, Երևան-Թբիլիսի ա/ճ, երկաթգիծ
18.	գ. Ալարեքս	126		306		գ.Դեբեդ, նրա այգիներ, ջրառ
19.	Ուռուտ					գ.Ուռուտի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, Լոռու ջրանցք
20.	Հովնանաձոր					գ.Հովնանաձորի առափնյա տնտեսություններ ու նրա վարելահողեր
21.	Կաճաճկուտ					գ.Կաճաճկուտի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, Սանահին ե/կն, Երևան-Թբիլիսի ա/ճ, երկաթգիծ
22.	Սելավաբեր ձորակներ					գ.գ.Լեյնոնտովոյի, Քարածորի, Արջուտի, Սարահարթի, Շենավանի, Քարաբերդի, Վահագնի, Լուսաղբյուրի, Սարալանջի, Գեղասարի, Անտառամուտի, Վարդաբլուրի, Պուշկինոյի, Գարգառի, Կողեսի, Յաղղանի, Լեջանի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր, Երևան-Թբիլիսի ա/ճ, երկաթգիծ

10) Մարզում կա քիմիական վտանգավոր մեկ օբյեկտ՝ «Վանաձորի Քիմպրոմ» ՓԲԸ-ի Վանաձորի քիմկոմբինատը: Ներկա պահին կոմբինատում պահեստավորված է 120 տ ամոնիակ: Աշխատանքներ են տարվում կոմբինատի վերագործարկման ուղղությամբ:

6. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ:

Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանայաին և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ Մարզում հնարավոր է հանդիսանան՝

1) մարզպետարանի աշխատակազմի վարչական շենքը, տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերը, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների հիմնական տեղակայման վայրերը և կառավարման պահեստային կետերը.

2) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները և կազմակերպությունները.

3) Դիլիջան-Վանաձոր, Կոասնի Մոստ-Ալավերդի, Վանաձոր-Ալավերդի, Վանաձոր-Գյումրի մայրուղային գազատարները և թվով 16 գազաբաշխիչ կայանները.

4) մարզի տարածքում գտնվող հիդրոէլեկտրակայանները.

5) «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 220 ԿՎ լարման թվով 2 ենթակայանները և այդ ենթակայաններից տարբեր ուղղություններով դուրս եկող 220 ԿՎ լարման օղային գծերը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 110 ԿՎ լարման թվով 42 ենթակայանները և դրանց կապող 110 ԿՎ լարման օղային գծերը.

6) Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի և Սպիտակ քաղաքները սնուցող ջրամատակարարման համակարգերը.

7) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.

8) մարզի տարածքում գտնվող հեռուստաաշտարակները, գործող տեղական հեռուստա-ընկերությունները.

9) Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի և Սպիտակ քաղաքների «Հայփոստ» ՓԲԸ բաժանմունքները.

10) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները, օղային հաղորդակցությունը.

11) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

12) Զենքի տեսակների կիրառման առավել հավանական թիրախ են հանդիսանում սահմանամերձ 10 կմ գոտում գտնվող 23 համայնքները:

Ռազմական դրության ժամանակ, հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում մարզի սահմանամերձ 23 համայնքներից կատարվում է մասնակի տարահանում, իսկ աղետալի ջրածածկման և սողանքային երևույթների ակտիվացման, կամ դրանց անմիջական սպառնալիքի դեպքում համայնքների վտանգավոր տարածքներից կատարվում է լրիվ տարահանում: Սահմանամերձ 23 համայնքներից ընդամենը տարահանվում է 15106 մարդ, որոնք 1255 միավոր տրանսպորտային միջոցներով և 62 գնացքի վագոններով տեղափոխվում և տեղաբաշխվում են մարզի 19 համայնքներում: Սողանքավտանգ գոտիներից տարահանվում է 12774 մարդ, որոնք 639 միավոր տրանսպորտային միջոցներով տեղափոխվում և տեղաբաշխվում են Վանաձոր, Սպիտակ և Տաշիր համայնքներում: Աղետալի ջրածածկման գոտիներից 4230 մարդ հետիոտն տեղափոխվում և տեղաբաշխվում են նույն համայնքների անվտանգ տարածքներում:

Մարզի տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում առկա են 2 խոշոր հացի գործարաններ, որոնք մեկ օրում արտադրում են 13 տ հաց, կաթի վերամշակման 4 գործարան, որոնց արտադրողականությունը մեկ օրում կազմում է 660 կգ պանիր, 1200 կգ թթվասեր և այլն:

Մարզի կենսաապահովման համակարգի օբեկտները և նրանց մոտավոր հնարավորությունները ներկայացված են աղյուսակ 6-ում:

7. Մարզում պահուստային ռեսուրսներ

Մարզում պահուստային ռեսուրսներ ներգրավելու նպատակով համապատասխան հայտեր են ներկայացվում Հայաստանի Հանրապետության կառավարություն:

8. Մարզի բուժհաստատությունների հնարավորությունները

Մարզում գործում են 8 հիվանդանոց, 24 առողջության պահպանման կենտրոններ և 5 պոլիկլինիկաներ:

Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 550 հատ: Մարզի բուժփմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 400 մահճակալ:

Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 445 մարդ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 1600 մարդ:

Մարզում բուժփմնարկների բազայի վրա ստեղծված են թվով 193 բժշկական քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ 762 մարդ անձնակազմով:

Տարահանման ժամանակ յուրաքանչյուր ավտոշարասյան մեջ նախատեսվում է 2 բժշկական բրիգադ՝ 2 գծային շտապօգնության ավտոմեքենայով:

III. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Տեղեկատվական ապահովումը

Մարզում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովումն իրականացվում է Վարչության և այլ կառավարման մարմինների կողմից տեղեկատվության հավաքագրման, պահպանման, թարմացման և յուրաժամանակ փոխանցման, ինչպես նաև բնակչությանն արտակարգ իրավիճակների ծագման հավանականության (փաստի), դրա հնարավոր հետևանքների, աղետի գոտում, երթուղիներում և տարահանման տարածքներում վարքի կանոնների մասին տեղեկացմամբ: Այդ նպատակով օգտագործվում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորություններն ու մարզի լրատվամիջոցները:

Մարզում արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվական ապահովման իրականացման համար պատասխանատու մարմին է հանդիսանում Վարչությունը:

10. Կացարաններով ապահովումը

Կացարաններով ապահովումը տուժած բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերին կացարաններով ապահովման համար աղետի գոտում պահպանված բնակելի տարածքների օգտագործումն է, ինչպես նաև տեղաբաշխման տարածքներում ժամանակավոր կացարանների փոխադրումն է, ծավալումը և կառուցումը:

Մարզի տարահանված բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերի համար ժամանակավոր կացարաններ կարող են ծառայել նաև ընդունող համայնքների հյուրանոցները, բնակելի տները, հանրակացարանները, մանկապարտեզները՝ անկախ սեփականության ձևից:

Կացարաններով ապահովման համար պատասխանատուներ են հանդիսանում ընդունող համայնքների ղեկավարները, որոնք տարահանման և ընդունման հանձնաժողովի ներկայացրած հայտերի հիման վրա կազմակերպում են կացարաններով ապահովման աշխատանքները:

11. Կենցաղ-տնտեսական ապահովումը

Կենցաղ-տնտեսական ապահովումը տուժած բնակչության և բնակչության կենսաապահովման ուժերին ջեռուցման, լուսավորման, տարածքների սանիտարական մաքրման, բաղնիքավազքարանային, հուղարկավորության ծառայություններով ապահովումն է, որը մարզի տարածքում կազմակերպվում է.

1) Կոմունալ-տեխնիկական ծառայության միջոցով, որը տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ապահովում է ջեռուցման, տարածքների սանիտարական մաքրման և բաղնիքավազքային ծառայություններով,

2) Էներգետիկայի ծառայության միջոցով, որը տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերի տեղակայման վայրերում լուծում է լուսավորման խնդիրներ,

3) Հատուկ սպասարկումների ծառայության միջոցով, որը կատարում է մահացածների հաշվառման, հուղարկավորության և այլ աշխատանքներ:

Կոմունալ, տեխնիկական, էներգետիկայի և հատուկ սպասարկումների ծառայությունները կենսաապահովման գործընթացի միջոցառումների իրականացման ժամանակ օգտագործում են սեփական, ինչպես նաև համայնքների և կազմակերպությունների ուժերն ու միջոցները: Ծառայությունների ապահովումը կատարվում է տարահանման և ընդունման հանձնաժողովի ներկայացրած հայտերի հիման վրա (աղյուսակ թիվ 6):

12. Ջրամատակարարումը

Ջրամատակարարումը բնակչությանը և բնակչության կենսաապահովման ուժերին ջրով ապահովման համար ջրի արդյունահանումը, մաքրումը և վարակազերծումը, պահպանումը, պաշարների լրացումը, տեղափոխումն ու բաշխումն է, որը կազմակերպում է մարզի կոմունալ-տեխնիկական ծառայությունը:

Մարզի տարածքներից տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում ջրամատակարարումն իրականացվում է ջրամատակարարման ստացիոնար համակարգերով, ջրհորների, արտեզյան հորատանցքերի, ջրի մատակարարման տրանսպորտային միջոցներով:

Մարզի տրանսպորտային ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի ջրատարեր և բեռնատար ավտոմեքենաներ՝ կոմունալ-տեխնիկական ծառայության ներկայացրած հայտերի հիման վրա:

13. Բժշկական ապահովումը

Բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի օբյեկտների (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

Մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայությունը: Մարզում բժշկական ապահովումն իրականացվում է առկա (անկախ կազմակերպարավական ձևից) առողջապահական հիմնարկների ուժերով և միջոցներով, ինչպես նաև բժշկական քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ուժերով: Բժշկական ապահովման միջոցառումների իրականացմանը հնարավոր է նաև առողջապահական և այլ ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը:

14. Սննդի և նյութատեխնիկական ապահովումը

Սննդի և նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված տուժած բնակչությանը և բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի համար անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցների և սննդամթերքի արտադրմանը, պահպանմանը, տեղափոխմանը, ինչպես նաև ժամանակին ու անխափան մատակարարմանը:

1) Սննդի և նյութատեխնիկական ապահովման համար պատասխանատու են մարզային քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները:

2) Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

3) Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև

վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

4) Կենսաապահովման համակարգի ուժերը ապահովվում են տեխնիկայով, վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, անհատական պաշտպանության և կապի միջոցներով, շինարարական և այլ տեսակի նյութական ու տեխնիկական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով:

5) Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

6) Տարահանման և տեղաբաշխման հանձնաժողովից ստանալով համապատասխան տվյալներ տարահանվող և տեղաբաշխվող բնակչության վերաբերյալ, նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը ստեղծում է բնակչության ժամանակավոր կացարաններին կից շարժական բաշխման կետ: Պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները ստանալով՝ նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները կազմակերպում են նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան շարժական կետերում:

7) Նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունները կազմակերպում են առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի առևտուրը՝ Մարզում առկա առևտրային ցանցի և շարժական առևտրային կետերի միջոցով:

8) Տրանսպորտային ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային ավտոտրանսպորտ և ավտոբենզատարներ՝ նյութատեխնիկական մատակարարման, առևտրի և սննդի ծառայությունների ներկայացրած հայտերի հիման վրա:

9) Նյութական միջոցների պահպանությունն իրականացվում է հասարակական կարգի պահպանության ծառայության ուժերով:

15. Կրթության ապահովումը

Կրթության ապահովումը կազմակերպում է մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչությունը՝ տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերի դպրոցների միջոցով:

1) Տուժած բնակչության կրթության կազմակերպման համար օգտագործվում են դպրոցների շենքերը, ինչպես նաև մշակույթի կենտրոնների շենքերը և ծավալվող վրանային ճամբարները:

2) Մարզի նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը տրամադրում է անհրաժեշտ քանակության վրաններ՝ մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության ներկայացրած հայտերի հիման վրա:

16. Սոցիալական ապահովումը

Սոցիալական ապահովումը տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում տուժած բնակչության համար կազմակերպում է տվյալ տարածաշրջանը սպասարկող սոցիալական ծառայության կենտրոնը՝ տարահանման և տեղաբաշխման հանձնաժողովի տրամադրած հայտերի հիման վրա:

19. Զբաղվածության ապահովումը

Զբաղվածության ապահովումը տարահանված բնակչության տեղաբաշխման վայրերում տուժած բնակչության համար կազմակերպում է տվյալ տարածաշրջանը սպասարկող զբաղվածության և աշխատանքի կենտրոնը՝ տարահանման և տեղաբաշխման հանձնաժողովի տրամադրած հայտերի հիման վրա:

18. Տրանսպորտային ապահովումը

Տրանսպորտային ապահովումը վտանգավոր (աղետի) գոտուց տուժած բնակչության տարահանման (տեղափոխման), ինչպես նաև կենսաապահովման բոլոր տեսակների նյութական ռեսուրսների մատակարարման խնդիրների լուծման համար միջոցառումների իրականացումն է, որը կազմակերպում է մարզի տրանսպորտային ծառայությունը.

1) կազմակերպում է Մարզի տարածքի ճանապարհների ստեղծված իրավիճակի հետախուզումը, անցանելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչի համար ստեղծվում է 2 երթուղային անցողունակության ապահովման խումբ.

2) հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.

բ. Բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի տեղափոխման համար.

գ. տուժածների փոխադրման համար.

դ. տրանսպորտային միջոցները չբավարարող ծառայություններին և կազմակերպություններին՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման տրանսպորտային ապահովման համար:

Տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է մարզպետի որոշմամբ՝ համաձայն ներկայացված հայտերի:

Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են՝ մարզի տարածքում գործող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման ու այլ կազմակերպությունների, քաղաքների և գյուղական համայնքների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտը և դրանց շահագործողները (վարորդներ, մեխանիզատորներ):

Կենսաապահովման միջոցառումներում ընդգրկված տրանսպորտային միջոցների սպասարկման համար ստեղծվում են շարժական ավտոլցավորման 2 խումբ, տրանսպորտային տարահանման 3 խումբ:

IV. ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԵՎ ԲԱՇԽՈՒՄԸ

Հումանիտար օգնության ստացումը և ըստ տուժած բնակչության տեղամասերի հատկացումները կազմակերպում է մարզպետարանը:

Ստացված հումանիտար օգնությունը պահեստավորվում է տարահանված բնակչության տեղաբաշխման համայնքներում և բաշխվում է համապատասխան համայնքապետարանների կողմից:

V. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

Տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ընթացքում փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների, բնակչության կենսաապահովման համակարգի ուժերի միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

VI. ՏԱՐԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետը ղեկավարում է տարահանված բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը:

Մարզի, համայնքների և կազմակերպությունների ղեկավարները կառավարում են իրենց ոլորտի բնակչության կենսաապահովման գործընթացը:

Մարզի, համայնքների և կազմակերպությունների ղեկավարներն իրենց իրավասության սահմաններում՝

1) պատասխանատվություն են կրում բնակչության կենսաապահովման պատրաստականության համար.

2) կազմակերպում և ղեկավարում են բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը.

3) հաստատում և գործողության մեջ են դնում տարահանված բնակչության կենսաապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների պլանները.

4) արձակում են բնակչության կենսաապահովման միջոցառումներին վերաբերվող որոշումներ, հրամաններ, հրահանգներ.

5) վերահսկում են բնակչության կենսաապահովման միջոցառումների կատարումը.

6) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Մարզում և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը ապահովում են քաղաքացիական պաշտպանության ծառայությունները:

Համայնքներում և կազմակերպություններում բնակչության կենսաապահովման միջոցառումները իրականացնում են բնակչության կենսաապահովման համակարգի ուժերը:

Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսաապահովման հարցերով մարզի պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեությունը համակարգում է Վարչությունը:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ